Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--_________ 2009 թվականի №Ա
քաղ. Երևան

## «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2009-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ժդ) կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի ը) ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2009-2011 թվականների ներդրումային ծրագրին՝ 61 615.0 մլն դրամ ծավալով՝ առանց ավելացված արժեքի հարկի, որից 2009 թվականին՝ 27 129.0 մլն դրամ՝ հետևյալ ուղղություններով.
    1) գազափոխադրման համակարգի ընդլայնում՝ 2009-2011 թվականների ընթացքում՝ 16 230.3 մլն դրամ, որից 2009 թվականին՝ 16 147.0 մլն դրամ (հավելված №1),
    2) գազափոխադրման համակարգում Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցում և ընդլայնում՝ 2009-2011 թվականների ընթացքում՝ 2 278.4 մլն դրամ, որից 2009 թվականին՝ 1 083.4 մլն դրամ (հավելված №2)
    3) գազափոխադրման համակարգի վերակառուցում՝ 2009-2011 թվականների ընթացքում՝ 15 269.8 մլն դրամ, որից 2009 թվականին՝ 1 807.3 մլն դրամ (հավելված №3),
    4) գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 2009-2011 թվականների ընթացքում՝ 746.5 մլն դրամ, որից 2009 թվականին՝ 258.8 մլն դրամ (հավելված №4),

5) գազաբաշխման համակարգի ընդլայնում՝ 2009-2011 թվականների ընթացքում՝ 1 750.0 մլն դրամ, որից 2009 թվականին՝ 750.0 մլն դրամ (հավելված №5),

6) գազաբաշխման համակարգի վերակառուցում՝ 2009-2011 թվականների ընթացքում՝ 7 106.1 մլն դրամ, որից 2009 թվականին՝ 2 315.7 մլն դրամ (հավելված №6),

7) գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 2009-2011 թվականների ընթացքում՝ 18 233.9 մլն դրամ, որից 2009 թվականին՝ 4 766.8 մլն դրամ (հավելված №7):

2. Հանձնարարել «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2009 թվականի նոյեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել ընկերության 2010-2012 թվականների ներդրումային ծրագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մարտի 7-ի «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2008-2010 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին» №97Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
հունիսի 2009թ.
ժամը